# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Դիավանտ ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/76 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | EB15-J10 | PENTAX MEDICAL | Վիդեոբրոնխոսկոպ՝ նախատեսված բրոնխոսկոպիկ հետազոտությունների և միջամտությունների համար: Գործիքային (աշխատանքային) ալիքի ներքին տրամագիծը՝ 2.0 մմ, ներմուծվող խողովակի աշխատանքային հատվածի երկարությունը՝ 600 մմ: Դիստալ ծայրի ծալման անկյունը դեպի վեր՝ 210°, իսկ դեպի վար՝ 130°: Տեսադաշտի ուղղությունը ուղիղ՝ 0°, տեսադաշտի անկյունը՝ 120°, տեսանելիության (ֆոկուսային) խորությունը՝ 3–100 մմ: Էնդոսկոպը օժտված է բարձր թույլատվությամբ պատկեր ապահովող տեսապատկերման մատրիցայով՝ CCD: Վիդեոբրոնխոսկոպը լիարժեք համատեղելի է էլեկտրավիրաբուժական գործիքների և լազերային համակարգերի հետ կլինիկական կիրառման (միջամտությունների) ժամանակ: Էնդոսկոպը ունի ամբողջությամբ ջրակայուն (հերմետիկ) կառուցվածք, որը թույլ է տալիս սարքի ամբողջական ընկղմումը հեղուկների մեջ՝ ախտահանման, մաքրման և ստերիլիզացման նպատակով: Վիդեոէնդոսկոպիկ համակարգի տեղադրումը, գործարկումը և հետագա տեխնիկական սպասարկումը կիրականացվեն բացառապես արտադրողի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կողմից որակավորված և սերտիֆիկացված մասնագետի կողմից։ Բժշկական գործընթացի անխափանությունն ապահովելու նպատակով, էնդոսկոպերի վնասման կամ տեխնիկական խափանման դեպքում, անհապաղ տրամադրվում է համարժեք փոխարինող գործիք։ Վիդեոբրոնխոսկոպը ունի լիարժեք տեխնիկական և ծրագրային համատեղելիություն պատվիրատուի մոտ առկա Pentax Medical էնդոսկոպիկ վիդեոպրոցեսորի և լույսի աղբյուրի հետ՝ և ապահովում է սարքերի միացումը (ինտեգրումը) առանց լրացուցիչ անցումային հարմարիչների (adapter) կամ արտաքին ձևափոխիչների։ Լիարժեքորեն ապահովում է պատկերի հաղորդումը, կառավարման կոճակների ֆունկցիոնալությունը և էնդոսկոպիկ համակարգի բոլոր աշխատանքային ռեժիմների անխափան շահագործումը։ Հայտով ներկայացվում է նաև պաշտոնական ներկայացուցչի կողմից տրված պաշտոնական հավաստում առկա համակարգի հետ տվյալ մոդելի լիարժեք համատեղելիության վերաբերյալ։ Երաշխիքային ժամկետ՝ 2 տարի։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Диавант в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/76 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | |